



ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՔԻՆ ԲԵՐԴԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մեծ և նշանակալից է Անի քաղաքի դերը միջնադարյան Հայաստանի ու հայ մշակույթի պատմության մեջ: Լինելով Բագրատունիների թագավորանիստ, կաթողիկոսական աթոռանիստ քաղաք, հայ ազնվականական հայտնի տների, մեծաթիվ արհեստավորների, առևտրականների, մտավորականների բնակության վայր՝ ամրակառույց ի սկզբանե, գեղեցկաշեն ու բազմամբոխ, Անին եղել է Հայոց աշխարհի քաղաքական, տնտեսական, հոգևոր և մշակութային կյանքի կարևոր կենտրոն: Անգամ կորցնելով իր թագակիրներին, քանիցս ավերվելով բարբարոսների կողմից, մինչև իր գոյության վերջը այն շարունակում էր քաղաքամայր հորջորջվել: Նախկին արքայանիստը փայլուն ծաղկում ապրեց XIII դարի առաջին տասնամյակներին, Չաքարյանների օրոք: Ճիշտ է, 1236 թ. մոնղոլների կողմից քաղաքի գրավումը, կողոպուտը, բնակչության ջարդն ու գերեվարությունը, ապա դրան հաջորդած հարկային ծանր լուծը Անիի ամայացման ու կործանման նախասկիզբը եղան, սակայն քաղաքը դեռ բավական ժամանակ կարողացավ մասնակիորեն պահպանել իր տնտեսական ու մշակութային դերը:

Չեռագիրը, որի մասին կխոսենք ստորև, պատկանում է անիական արվեստի վերջին շրջանի եզակի հուշարձանների թվին և դասվում է մինչև մեր օրերը հասած այն փոքրաթիվ ձեռագրերի շարքը, որոնք ստեղծվել են բուն քաղաքում: Դա մի Ավետարան է՝ գրված 1298 թ. Անիի Ներքին բերդում: Չեռագիրն այժմ պահվում է Լենինգրադում:

Տեղի Ասիական թանգարանի կողմից այն ձեռք է բերվել 1913 թ., ավելի ուշ, այդ թանգարանի հավաքածուի հետ անցել է ՍՍՀՄ ԳԱ Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտին, ուր և գտնվում է մինչև ծրս՝ պահվելով B⁴⁴ համարի տակ: Չեռագրի ուսումնասիրությամբ զբաղվել են լենինգրադցի գիտնականներ Կ. Յուլբաշյանը¹, որը կատարել է ձեռագրագիտական քննություն, և Տ. Իզմայլովան², որն անդրադարձել է Ավետարանի նկարազարդմանը: Մենք ես, անդրադառնալով սույն ձեռագրին, նպատակ ունենք այն քննության առնել անիական ձեռագրական հուշարձանների հետ իր ունեցած առնչությունների տեսանկյունից, ընդգծել նրա կապը քաղաքի պատմության ու մշակույթի հետ:

Հենց սկզբում նշենք, որ B⁴⁴ համարը կրող ձեռագիրը մի ամբողջություն չէ, այլ բաղկացած է մինևույն կապի մեջ ամփոփված երկու միավորից. 1—167 թերթերը Ավետարան են, իսկ 168—213 թերթերը պարունակում են աղոթքներ և ջրօրհների ծիսակարգ: Կ. Յուլբաշյանը գտնում է, որ երկրորդ մասը ծագումով ավելի հին է (XI—XII դդ.), բայց Ավետարանին է կցվել հետագայում, 1596 թ. ձեռագրի նորոգման ժամա-

¹ К. Юзбашян, Ангийская рукопись 1298 г. «Բաներ Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 77—94:

² Т. Izmailova, Le manuscrit enluminé d'Ani de 1298, Revue des études Arméniennes, t. VIII, Paris, 1971. p. 289—309.

նակ³: Ավետարանը ևս, գրչության նյութի առումով, միատարր չէ: Նրա սկզբի մասը մագաղաթի վրա է գրված, իսկ 119 թերթից շարունակված է թղթի վրա: Ձեռագրի երկրորդ մասը ամբողջովին թղթի վրա է գրված: Պահպանված հիշատակարանները Ավետարանի էջերում են, և այդտեղ նշված տվյալները (գրչության տեղն ու ժամանակը, գրիչը, մանրանկարիչը, ստացողը և այլն) վերաբերում են Ավետարանին, իսկ ձեռագրի երկրորդ մասի վերաբերյալ տեղեկություններ չունենք. պարզ է միայն, որ դա գրված է ուրիշ գրչի ձեռքով և ծաղկված չէ:

Ավետարանը պարունակում է 19 պրակ, թերթ՝ 167 (23,5×15,5 սմ), գրված է բոլորգրով, երկայուն, տող՝ 29: Այն ընդհանուր առմամբ ամբողջական է (պակասում են մի քանի թերթեր): Ձեռագրի գրիչն է եղբայրիկ արեղան, նկարիչը՝ Խաչատուրը, ստացողը՝ անեցի Հակոբ քահանայն: Գլխավոր հիշատակարանը, որը գտնվում է Ավետարանի վերջում (էջ 166ա—167ա), պարունակում է տեղեկություններ ինչպես պատվիրատուի տոհմի և ձեռագրի գրության շարժառիթի, այնպես էլ նրա գրվելու ժամանակի և Արջո Առիճի ուխտին ընծայվելու վերաբերյալ: Այն գրված է եղբայրիկ գրչի ձեռքով, Ավետարանի բուն գրչությունից մի փոքր մանր բոլորգրով: Գլխավոր հիշատակարանից մեջ ենք բերում առավել տեղեկաշատ մի քանի հատված. «Արդ, Յակովբս այս, լեռնալ ի սեր սրբութեան, ետ գրել զսա վասն յիշատակի հարապատ ըստ մարմնոյ եղբար իւրոյ **Ստեփաննոսի...** Իսկ ես... **Յակոբ ի մայրաքաղաքէ Անոյ**, հանդերձ աստուածագոյք եղբայր իմ **Ստեփաննոսի** ի մանկութենէ վարժեալ ի Սուրբ ուխտս **Առնանեծոյ**, ի դրան **Սրբոյ Աստուածածնի** և **Սուրբ Գրիգոր** քրիստոսապար **Սուրբ Նշանի**ս հովանեալ տաղարեալ և յայսմ տեղոշ ընկալեալ զաւծումն քահանայութեան պարգևաք և ոչ ըստ արժանեաց: Եւ քանպի ոչ ունէի այլ ինչ փոխարէկ յաստուածակոյս կողմն հատուցանել եղբարն իմ **Ստեփաննոսի**, բայց միայն զկենսունակս զայս **Աւետարան**, զոր աւանդեցի և ընծայեցի ի բնական տեղիս մեր՝ ի Սուրբ ուխտս **Առնանեծոյ**, ի յիշատակ ինձ և եղբարն իմ և վերաապցեալ հար և մար և քեր և ամենայն արեան մերձատրաց իմոց: ...Արդ գրեցաւ սա ի քաղաքիս **Անո**, ի բերդս **Ներքի** կոչեցեալ, ձեռամբ **Եղբայրիկ արեղայի**, ընդ հովանեալ **Սուրբ Յովաննիսի**: Յաշխարհակալութեան եղլան **Ղազարի**, ի թագաւորութեան **Հայոց Սմբատ**, ի կաթողիկոսութեան տեառն **Գրիգորի**, ի վրաց թագաւորութեան

Վաղթանգին, ի պատրոնութեան **ամիրսպասապար Ըահնշահին** և յեպիկոպոսութեան տէր **Յովաննիսի**, ի տէրութեան **Առնարճո Մագիստրոսնց տէր Յովաննիսի** և **Ամիրին** որդո **Փախրադինին**: Արդ էր թիս **Հայոց Չիւե** (1298 թ.):»։ Այստեղ (էջ 167ա) ավարտվում է գլխավոր հիշատակարանը, իսկ հաջորդ էջում (167բ) Խաչատուր նկարչի հիշատակարանն է՝ գրված հենց իր ձեռքով, մուգ կարմիր թանաքով. «Եւ Կիս՝ զեղկելի նը՝ կարողս, թերևս յամարիք արժանի յիշել ի Տէր և ի Տեառնէ խնդրել թողութիւն մեղաց, զի բազմադէմ են մեղք իմ, մի թէ ներեսցէ Տէր և ապատեսցէ ի կապից մեղաց»: Ուշագրավ է, որ այստեղ նկարիչը չի տալիս իր անունը: Այն գրված է Եվսեբիոսի նամակի խորանի (էջ 3ա) գլխավորի փոքր կամարի տակ՝ կարմիր ներկով. «Կխաչատուր նը՝ կարողս յիշեալ ի Տէր, աղաչեմ»: Ձեռագրում պահպանվել է նաև նրա նորոգմանը նվիրված մի հիշատակարան⁴:

Ինչպես տեսանք, Անիի Ներքին բերդում գրվելուց հետո Ավետարանը նվիրվել է Արջո Առիճի ուխտին: Ստացող Հակոբը, որն իրեն անեցի է համարում, ծագումով Արջո Առիճից էր, քանի որ եղբոր մասին խոսելիս հիշատակարանում գրում է. «ի բնական տեղիս մեր՝ ի Սուրբ ուխտս **Առնանեծոյ**». մեկ այլ տեղ՝ «ի մանկութենէ վարժեալ ի Սուրբ ուխտս **Առնանեծոյ**»: Ավելացնենք, որ Արջո Առիճը Անի քաղաքի հետ գտնվում էր սերտ վարչա-տնտեսական և մշակութային կապի մեջ, իսկ տեղի Աստվածածնի և Լուսավորչի ուխտը ուներ նաև իր դպրոցն ու գրադարանը⁵:

Պատմագրական առումով արժեքավոր է ձեռագրի գլխավոր հիշատակարանի վերջին մասը, ուր ոչ միայն նշված է գրության կոնկրետ թվականը՝ (Չիւե) 1298 թ., այլև հիշատակված են այդ ժամանակաշրջանի քաղաքական և հոգևոր նշանավոր գործիչները՝ իրենց տիտղոսներով: Առաջինը հիշվում մոնղոլ Ղազան խանը (1295—1304), որի տէրության մեջ էր ընդգրկված ողջ պատմական Հայաստանը: Սրա օրոք կատարվում են մի շարք մասնակի բարենորոգումներ, որոնք նպատակամղված էին երկրի քաղաքական

⁴ Հիշատակարանում ասվում է, որ 1596 թ. Միրիջան անունով մեկը, Աստապատի Ս. Հովհաննես եկեղեցում ձեռագիրը նորոգել տալով, նվիրում է նույն գյուղի Ս. Վարդան եկեղեցուն: Ձեռագիրը նորոգել են «...Յովհան կազմողս և աշակերտն Թումայ սարկաւազն»:

⁵ Կ. Մաթևոսյան, Արջո Առիճի դպրոցը XVIII դ., «ՍՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1984, № 3, էջ 67—70:

³ Կ. Юзбашян, նշվ. աղյ., էջ 81—82:

ու տնտեսական կյանքի կայունացմանը⁶։ Անի քաղաքը թեև կորցրել էր իր նախկին դերը, սակայն այդ շրջանում քաղաքային կյանքի մի փոքր աշխուժացում էր ապրում։ Հիշատակարանում այնուհետև հիշվում են Կիլիկիայի հայկական պետության թագավոր Սմբատը (1296—1299), Հայոց կաթողիկոս Գրիգոր Է Անավարդեցին (1293—1307), վրաց թագավոր Վախթանգը, ապա Անիի ու Արշո Առիճի աշխարհիկ և հոգևոր տերերը՝ Չաքարեի որդի Շահնշահ I-ի թոռ ամիրսպասալար Շահնշահ II-ը, Անիի եպիսկոպոս տեր Հովհաննեսը, Արշո Առիճից՝ տեր Հովհաննես Մագիստրոսենցը և Փախրադինի որդի Ամիրը⁷։

Այժմ անդրադառնանք սույն ձեռագրի գրության տեղին, ապա գրչին և նկարչին։

«Գրեցաւ սա ի քաղաքիս Անո, ի բերդս Ներքի կոչեցեալ» — արձանագրում է Ներքի կոչեցեալ քաղաքի հիշատակարանում։ Հետաքրքիր է, որ ձեռագրի գրության տեղին վերաբերող այս հիշատակությունը առիթ հանդիսացավ պարզելու Անի քաղաքում Ներքին բերդ անունը կրող վայրի ճիշտ տեղը։ Կ. Յուսեփյանը մանրամասն քննությամբ ցույց է տալիս, որ պատմական մի շարք աղբյուրներում հիշատակվող Անիի Ներքին բերդը հետագայում քաղաքի Աղջկաբերդ կոչված մասն է⁸։ Սակայն Աղջկաբերդը Անիի մի սովորական հատվածը չէր, այն ունեցել է իր բավական հարուստ և դարերի խորքը գնացող պատմությունը։ Դիտումների և հետապոստությունների ընթացքում մեծավաստակ Թորոս Թորամանյանը եկել է այն եզրակացության, որ Աղջկաբերդում ամրոց և տաճար է կառուցված եղել Կամարակների օրոք և դեռ ավելի վաղ ժամանակներում⁹։ Թ. Հակոբյանը, ի մի բերելով «Անիում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և ճանապարհորդների դիտումները», գրում է, որ Աղջկաբերդի ժայռային թերակղզին քաղաքի «ամենահնագույն» մասն է¹⁰։ Ըստ վաղեմի ավանդության, այստեղ կործանելով հեթանոսա-

կան տաճարը՝ քրիստոնեական եկեղեցի է հիմնել Գրիգոր Լուսավորիչը։ Աղջկաբերդում հնագույն բնակավայր ու սրբատեղի լինելու մասին է վկայում XIII դարի սկզբին Չամսաբե ամիրսպասալարի այդտեղ կառուցած քարե ամրասպասալարի պաշտպանությունը, որի մեջ ասեկեղեցու արձանագրությունը, որի մեջ ասվում է, թե այն հիմնադրվել է. «...ՄԵՐԶ ԱՌԷԿԵՂԵՑ [ԱՌՆ] ՇԻՆԵԱԼ Ի ԼՈՒՍԱՒՈՐԻՉԷՆ ՄԵՐՄԵ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳ [ՈՐԻ]»¹¹։

Աղջկաբերդ անունը ուշ ժողովրդական ավանդության ծնունդ է¹²։ Այդ անունը ծանոթ է միջնադարյան հայ պատմիչներին։ Մյուս կողմից՝ նրանք հիշատակում են Ներքին բերդ անունը, որպես Անիի ամուր և ապահով մասերից մեկը։ Արիստակես Լաստիվերտցին իր «Պատմության» «Վասն տիեզերահռչակ քաղաքին Անոյ խողխողմանն արով» գլխում, նկարագրելով սելջուկների ներխուժումը քաղաք, գրում է. «Իսկ բազմությունն արանս և կանանց յապարանս թաշտարացն դիմեալ՝ իբրև թե կարիցեն ապրել, և այլքն ճողոպրեալ յամուրն, որ Ներքի բերդ կոչի»¹³։ Մեկ այլ տեղ, խոսելով Վեստ Սարգսի ընդվզման մասին, պատմիչը գրում է, որ նա «...վզանձս թագաւորութեանն առեալ ի Ներքին ամուրն մտանէ յանառն Անի»¹⁴։ Սելջուկների կողմից քաղաքի գրավման դեպքերը նկարագրելիս Մատթեոս Ուռհայեցին նույնպես նշում է, որ Անիի պաշտպանները, փախչելով, ամրացան Վերին բերդում (Միջնաբերդ—Կ. Մ.) և Ներքին բերդում. «...սկսան սոքա ամրանալ ի Վերին և ի Ներքին բերդն»¹⁵։ Անի քաղաքի Ներքին բերդի վերաբերյալ առավել որոշակի տեղեկություններ է հաղորդում Վարդան Արևելցին։ Ընթերցողին Դարանաղյաց գավառի Անի Կամախի և Շիրակի Անիի հնարավոր շփոթությունից վերծ պահելու համար նա գրում է. «Կոչի Անի և Կամախն այժմ կոչեալ բերդ, բայց ամուրն Անի Ներքին բերդն է ամրացեալ»¹⁶։ Քիչ անց, խոսելով քաղաքի կա-

⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 638։

⁷ Թվարկված անունների մի մասին հանդիպում ենք Անիի տարբեր վիճագիր արձանագրություններում։ Տե՛ս, Դիվան հայ վիճագրության, պր. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966։

⁸ К. Юзбашян, նշվ. աշխ., էջ 88—93։

⁹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. ժող., Երևան, 1942, էջ 330, 302։

¹⁰ Թ. Հակոբյան, Անիի պատմություն, գիրք Ա, Երևան, 1980, էջ 25, 36։

¹¹ Դիվան հայ վիճագրության, էջ 58, № 172, տե՛ս նաև Թ. Թորամանյան, նշվ. աշխ. էջ 330, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 58։

¹² Ա. Ղախանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 208—209։

¹³ Պատմություն Արիստակեսի Լաստիվերտցու, Երևան, 1963, էջ 135 (ընդգծումներն իմն են—Կ. Մ.)։

¹⁴ Նույն տեղում, էջ 58։

¹⁵ Մատթեոսի Ուռհայեցու Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1869, էջ 177, հմմտ. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 97։

¹⁶ Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 86, հմմտ. Մեծին Վարդանայ Բարձրբերդեցու Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 117—118։

ուղապատման մասին և մեկնաբանելով Անի անվան նշանակությունը, պատմիչը նշում է, որ, կառուցված լինելով հնուց, Ներքին բերդն արդեն կրում էր այդ (Անի) անունը: «...մինչդեռ չև էր ընդարձակ շինեալ քաղաքն Անի, որ կոչի խնամք, թէպէտ Ներքին բերդն ընդ այսու անուամբ էր և հին ժամանակաւ շինեալ»¹⁷: Վարդանը մի երրորդ անգամ հիշատակում է Ներքին բերդ տեղանունը՝ կապված Հայաստանում քրիստոնեության հաստատման և Գրիգոր Լուսավորչի գործունեության հետ, գրելով. «Ասէն թէ իշխան մի լուծեալ ոտիւք՝ ի Ներքին բերդն ամրացեալ ոչ հաւանէր գալ ի մկրտութիւն, ի դառնալս Հայոց ի հաւատս»¹⁸: Հետագա շարադրանքում խոսվում է այն մասին, որ Գրիգոր Լուսավորչին հաջողվում է մկրտել այդ համառ իշխանին: Ինչպես տեսնում ենք, Վարդան Արևելցու հաղորդածը լրիվ համապատասխանում է հնագիտական նյութերի տվյալներին, ըստ որոնց Աղջկաբերդ ժայռային թերակղզում հնագույն բերդ-բնակավայր է եղել: Մյուս կողմից՝ պատմիչը ներկայացնում է Ներքին բերդը Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապող երկրորդ փաստը, որն արդեն հիմք է տալիս կարծելու, թե այստեղ սույն ավանդույթի հետ չէ, որ գործ ունենք:

Ներքին բերդի անունը¹⁹ բացատրվում է նրա և Միջնաբերդի դիրքերի հարաբերությամբ: Ներքին բերդը ցածր՝ ներքև է միջնաբերդից, որը, ինչպես տեսանք, Ուռնայեցին «Վերին բերդ» է կոչում²⁰: Պատմիչների հաղորդած տվյալները համադրելով՝ կարելի է եզրակացնել, որ և՛ հետագայում Միջնաբերդ դարձած բերդը, և՛ Ներքին բերդը կոչվել են միևնույն Անի անվամբ, բայց քանի որ դրանք առանձին ռազմա-ստրատեգիական միավորներ էին՝ ամրությունների նույն համակարգի երկու տարբեր կենտրոններ, ուստի միմյանցից զանազանվել են հավելյալ

անվանումներով. մեկը կոչվել է «Վերին բերդ» կամ Անի, մյուսը՝ Ներքին բերդ, որը նույնպես Անի է: Հետագայում, երբ Անին դարձավ քաղաք և մայրաքաղաք, «Վերին բերդին» վիճակվեց Միջնաբերդ՝ արքունի պալատ լինել: Այդ ժամանակից էլ նա կորցրեց իր «Վերին» մականունը՝ ավելի հաճախ կոչվելով «ապարանս թագաւորաց», կամ «արքունական ապարանք»²¹: Մ. Հովհաննեսյանը «Հայաստանի բերդերը» գրքի «Անիի Ղըզ-դալա բերդը (Աղջկա բերդ)» բաժնում գրում է, որ հայ պատմիչներից ոչ մեկը «վարմանալիորեն չի հիշեր Աղջկա բերդը» և քիչ անց նկատում, որ «ասիկա նշան է, թե այդ բերդը հին ատեն ուրիշ անունով մը ճանչցված էր»²²: Հենց այդպես էլ կա. միջնադարում Աղջկաբերդը կոչվել է Ներքին բերդ, ինչպես և հիշվում է հայ պատմիչների կողմից: Դա նույն Անին է, նրա անբաժան ու հնագույն մասը: Այն վեր է խոյանում Ախուրյան գետի առափնյա իրականական քարածայր հրվանդանի վրա, քաղաքի հարավային կողմում: Ահա այստեղ, 1298 թ. «ընդ հովանեաւ Սուրբ Յովաննիսի» Եղբայրիկ գրիչը ընդօրինակել է վերոհիշ: Ավետարանը Հակոբ քահանայի համար:

XIII դարի վերջին Ներքին բերդում ձեռագրի գրության փաստը և նույն Ս. Հովհաննես եկեղեցու պատերին XIV դարի սկզբներին փորագրված մի քանի վիմագիր արձանագրությունների առկայությունը²³ ցույց են տալիս, որ, հավատարիմ իր ծագման հնություն, Անիի գոյության վերջին շրջանում իսկ Ներքին բերդը աչքի է ընկել իր կենսունակությամբ, աշխույժ հոգևոր ու մշակութային կյանքով:

Ինչպես նշվեց, ձեռագիրն ընդօրինակվել է «ձեռամբ Եղբայրիկ աբեղայի»: Դատելով Ավետարանի հստակ բոլորգրից՝ նա հմուտ է եղել գրչության արվեստի մեջ: Ձեռագրի բավական ընդարձակ գլխավոր հիշատակաւոր և համաբարբառները նույնպես գրված են գրչի ձեռքով, համեմատաբար մանր բոլորգրով: Հիշատակարանում Եղբայրիկ աբեղան իր մասին ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդում: Պահպանվել է սակայն մեկ ուրիշ ձեռագիր Ավետարան՝ ընդօրինակված 1305 թ. «ձեռամբ նուաստ աբեղայի Եղբայ-

²¹ Արխաուկեն Լաստիվերացի, նույն տեղում, էջ 135, 60:

²² Միքայել Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 721:

²³ Դիվան հայ վիմագրության, էջ 70, №№ 214, 215:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Աղբյուրներում սույն տեղանունը երբեմն գրվում է Ներքի բերդ, երբեմն՝ Ներքին բերդ: Ակնհայտ է, որ դրանցում էական տարբերություն չկա: Մենք օգտագործում ենք Ներքին բերդ ձևը:

²⁰ Ներքին բերդի և Միջնաբերդի տեղագրությունը շատ լավ երևում է Ն. Մատի «Անի» գրքում բերված մի լուսանկարում: Այստեղ քաղաքը լուսանկարված է հարավից. առաջին պլանում Ներքին բերդն է, իսկ երկրորդ պլանում՝ բարձրադիր Միջնաբերդը: Վերջինս քաղաքի ամենաբարձր մասն է հանդիսանում: Տե՛ս H. Mapp, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.-М., 1934, ил. 18, տե՛ս նաև նույն գրքում վերոհիշված հատակագծային ներդիրները 56-րդ էջից հետո:

րիկ կոչեցեալ»²⁴: Այս ձեռագիրն այժմ պահվում է Իրանում, տեղի Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: Ավետարանի գրության վայրը հայտնի չէ²⁵: Դատելով հիշատակարանի մեզ հետաքրքրող հատվածից՝ այդ վայրը Անին չէ, սակայն դա չի բացառում, որ Ներքին բերդի և 1305 թ. Ավետարանները գուցե նույն Եղբայրիկ աբեղան է ընդօրինակել: Երկու ձեռագրերն էլ գրված են բոլորգրով, տների գլխատառերը՝ կարմիր թանաքով: Ինչ խոսք, միայն այս ձեռագրերի գրչության մանրապնդին համեմատությունը կարող է պարզել գրչի նույնության կամ տարբերության հարցը²⁶: Ավելացնենք միայն, որ գրիչ Եղբայրիկը 1305 թ. ձեռագրի հիշատակարանում հիշում է իր ընտանիքի անդամներին. «վեղբայրն իմ Վստեփանոս, որ ի ծաղիկս աշխատեցաւ: Եւ պարկեշտ քոյրիկն իմ ՎՏղայտիկին, որ բազում գթով ապաստորեաց մեզ...»²⁷:

Այժմ անդրադառնանք նկարիչ Խաչատուրին և Ներքին բերդի Ավետարանի գեղարվեստական հարդարանքին: Ձեռագրի 2բ—3ա էջերում Եվսեբեոսի նամակն է Կարպիանոսին, 3բ—7ա էջերում՝ վետեղված են ութ խորաններ: Դրանց անմիջապես հաջորդում են երկու հանդիպակաց էջերում նկարված տերունական պատկերները (էջ 7բ, 8ա): Պահպանվել են չորս ավետարանիչների պատկերները, համապատասխան անվանաթերթերով (Մաթևոս, 8բ, 9ա, Մարկոս, 49բ, 50ա, Դուկաս, 75բ, 76ա, Հովհաննես, 125բ, 126ա): Ձեռագրի էջերում կան նաև բազմաթիվ լուսանցավարդեր, որոնց մի մասը գունավարդված չէ: Տերունական նկարները պատկերված են էջերի վերին և ստորին մասերում՝ ներկայացնելով ավետարանական վեց տեսարան, 7բ էջի վերևում պատկերված է Ավետումը, ներքևում՝ Մարիամի այցը

Եղիաբեթին, 8ա էջի վերևում Ճնունդը և մոզերի երկրպագությունը, ներքևում՝ Մկրտությունը և Կանայի հարսանիքը:

Նկարիչ Խաչատուրի վերաբերյալ հիշատակարաններում ոչ մի կենսագրական տեղեկություն չկա: Սակայն մանրանկարների ոճը և պատկերագրությունը վկայում են, որ Խաչատուրը հայ մանրանկարչության Վասպուրականի դպրոցի ներկայացուցիչ է: Ներքին բերդի Ավետարանի նկարապարդումը համեմատելով 1303 թ. Արճեշում ընդօրինակված մի ձեռագրի մանրանկարների հետ (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4052), Տ. Իսմայլովան եկել է այն եզրակացության, որ դրանք պատկանում են միևնույն ոճական ուղղությանը, պատկերագրությամբ և կատարման եղանակով սերտորեն կապված են միմյանց²⁸: Խաչատուրին Վասպուրականի մանրանկարիչ է համարում նաև Հ. Հակոբյանը²⁹: Արճեշի ձեռագրի հիշատակարանում գրիչ Ստեփանոսը հիշատակում է Խաչատուր անունով մեկին, որպես գրչության արվեստի մեջ հմուտ անձնավորության. «Դարձյալ աղաչեմ յիշեցէք վխաչատուր գր[ագիր], որ ի սմանէ ազտեցաք ի գրչական արուեստից սակաւ մի...»³⁰: Տ. Իսմայլովան ենթադրում է, որ խոսքն այստեղ կարող է Ներքին բերդի Ավետարանի նկարիչ Խաչատուրի մասին լինել:

Ընդհանուր առմամբ, Խաչատուր մանրանկարչի արվեստին հատուկ է գեղարվեստական զուսպ արտահայտչաձևերի կիրառումը տերունական նկարներում, մյուս կողմից՝ վարդապին համակարգերի նուրբ մշակումը անվանաթերթերում և խորաններում: Ներքին բերդի Ավետարանում հատկապես հարուստ հարդարանք ունեն անվանաթերթերը, որոնց կիսախորաններում գունազեղ, նրբառճ ուրուպարդեր կան: Հետաքրքիր է, որ անվանաթերթերի վարդերում օգտագործված է ոսկի, իսկ նրանց հանդիպակաց էջերում գտնվող ավետարանիչների նկարներում այն բոլորովին չի օգտագործված: Ուշագրավ է նաև նկարիչ Խաչատուրի անվան հիշատակման ձևը: Նրա անունը գրված է ոչ թե հիշատակարանում, այլ խորանի գլխավարդի կիսաշրջանի մեջ (էջ 3ա): Մանրանկարիչների անվան հիշատակման այս եղանակը բնորոշ է մեզ հայտնի անիական այլ ձեռագրերին: Օրինակ՝ «Հաղբատի Ավետարանում» նկարիչ Մարգարեն առաջին անգամ

²⁴ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 33:

²⁵ Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենաիրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 59: Ձեռագիրը գրված է թղթի վրա, թերթ՝ 353 (23,2×16,7), ստացողն է Մխիթար քահանան, ծաղկողը՝ Ստեփանոսը:

²⁶ Տողբերիս հեղինակը առիթ է ունեցել Լենինգրադում ուսումնասիրելու Անիի 1298 թ. Ավետարանը, սակայն այս և 1305 թ. Ավետարանի գրչության համեմատությունը առայժմ չենք կարող կատարել, քանի որ Մաշտոցի անվ. Մատենադարանում չկա Իրանի Երևանի Ս. Սարգիս եկեղեցու—389 (1) ձեռագրի մանրաժապավենը կամ գոնե գրչության մի նմուշ պարունակող լուսանկար:

²⁷ Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց..., էջ 59:

²⁸ Т. Измайлова, նշվ. աշխ.:

²⁹ Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Ա, Երևան, 1976, էջ 163, նկ. 18:

³⁰ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 20:

իր անունը գրում է խորանահիմքի երիզի տակ³¹: խորանների պուրների և երիզների վրա են իրենց անունները գրել նաև Անիի Բեխենց վանքում գրված մեկ այլ ձեռագրի ստեղծողները (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5554): Իր անունը հաճախ էր խորաններում գրում նաև Հոռոմոսում աշխատող նշանավոր գրիչ և մանրանկարիչ Իգնատիոսը³²:

Այսպիսով, Անիի 1298 թ. Ավետարանը թեև նկարազարդմամբ հարում է մանրանկարչական այլ դպրոցի, սակայն չի դադարում հետաքրքրություն ներկայացնելուց, որպես բուն քաղաքում գրված և պատկերազարդված ձեռագիր: Այն առանձնապես թանկ է մեզ համար, որպես Անիի մշակույթի հուշարձան՝ անիական ստեղծագործ ոգու ծընունդ:

³¹ Գարեգին Հովսեփյան, Ցիջատակարանք..., էջ 746:

³² Կ. Մաթևոսյան, Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 1, էջ 121—134: Նույնի՝ Ձեռագիր գրված

Անի քաղաքի Բեխենց վանքում, Պատմա-բանասիրական հանդես, 1984, № 1, էջ 222:

